Տարածաշրջանի և համաշխարհային տնտեսական ցնցումների համատեքստում Հայաստանի քաղաքականության մարտահրավերները և հնարավորությունները

Մասուդ Ահմեդ
ԱՄՀ Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի վարչության տնօրեն
29 հունիսի 2015 թ.

Հայաստանի Առաջնորդության դպրոց
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Բարի երեկո բոլորին
Ինձ համար շատ հաճելի է վերադառնալ Երևան: Կցանկանայի շնորհակալություն հայտնել Առաջնորդության դպրոցին և ԱՄՀ մշտական ներկայացուցիչ Տերեսա Դաբանին՝ ինձ հնարավորություն ընձեռելու համար դիմելու այս ունկնդիրներին՝ երիտասարդ, ձևավորվող առաջնորդներին, ովքեր հաջորդ մի քանի տասնամյակներում Հայաստանն առաջ կմղեն:

Այսօրվա զրույցի ժամանակ կանդրադառնամ Հայաստանի տնտեսության հեռանկարին, տարածաշրջանի միջավայրին, Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին և հսկայական հնարավորություններին, որոնցից Հայաստանը կարող է օգուտ քաղել՝ ավելի լավ ապագայի համար:Ամբողջ ընթացքում շեշտը կդնեմ առաջնորդության և հավաքական գործողության կարևորության վրա՝ մարտահրավերներին և հնարավորություններին արդյունավետորեն արձագանքելու համար: Ելույթից հետո ակնկալում եմ Ձեր հարցերը և քննարկում:

Տարածաշրջանում հաճախ եմ շրջագայում, սակայն Հայաստան կատարածս վերջին այցից անցել է վեց տարի: Թվում է՝ դժվար պահերին եմ գալիս:

Վերջին անգամ այստեղ էի 2009 թ.-ին, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը շատ ուժեղ ազդեցություն էր ունեցել: ՀՆԱ-ն անկումն այդ տարի ապշեցուցիչ էր՝ 14 տոկոս, դրամական փոխանցումների և այլ արտաքին հոսքերի ցամաքելուն և շինարարության՝ տասնամյակի աճի հիմնական շարժիչի կոլապսին զուգընթաց: Ճգնաժամից հետո իշխանությունները հաջողությամբ կայունացրեցին տնտեսությունը՝ միջազգային հանրության օժանդակությամբ: Սակայն այդ արձագանքը պետական և մասնավոր հատվածի ավելի մեծ պարտքի ժառանգություն թողեց:

Այժմ այստեղ եմ արտաքին ճնշումների ժամանակաշրջանում, որոնց աղբյուրը Ռուսաստանի տնտեսության աճի դանդաղումն է, ավելի ցածր դրամական փոխանցումները, պղնձի ավելի ցածր գները և համաշխարհային և եվրոպական թույլ աճը:

Տարածաշրջանային և համաշխարհային հեռանկարը

Անդրադառնանք արտաքին միջավայրին, որին Հայաստանն առերեսվում է՝ նախ ուշադրությունը կենտրոնացնելով առևտրի գլխավոր գործընկերների վրա: 2015 թ.-ին Ռուսաստանի հեռանկարը 3½ տոկոս անկումն է, հաջորդ տարի զրոյական աճը և միջնաժամկետ հեռանկարում տարեկան մինչև 1½ աճի բարձրացում: Ռուսաստանի իշխանությունների պատկերացմամբ ուղին ավելի լավատեսական է՝ միջնաժամկետում կազմելով 3 տոկոս:

Դառնալով Եվրոպային՝ նշենք, որ հետագա երկու տարիներին և միջնաժամկետ հեռանկարում նույնպես համեստ աճ է սպասվում՝ շուրջ 2 տոկոս: Չինաստանն ու մյուս զարգացող շուկաները կարևոր են Հայաստանի ապրանքների՝ մետաղների և հանքանյութերի արտահանման համար: 2015–16 թթ. այս

երկրներում սպասվում է աճի տեմպի դանդաղում: Կարևոր է նկատել, որ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող տնտեսություններում կան աճի ներուժի հնարավոր նվազման նշաններ: «Աճի ներուժը» միջնաժամկետ հեռանկարում սպասվող աճի տեմպն է, որը հիմնված է աշխատուժի, կապիտալի և արտադրողականության սպասվող մասնակցության վրա: Եթե աճի ներուժն ակնկալվում է, որ ավելի ցածր կլինի՝ չափազանց ցածր՝ աշխատատեղերի ստեղծման համար, կառուցվածքային բարեփոխումների իրականացումը հրամայական է՝ բարձր գործազրկության խնդրի լուծման, մրցակցության ամրապնդման և մասնավոր ներդրումների համար խթաններ ստեղծելու և արտադրողականության բարձրացման համար:
Այս համատեքստում Հայաստանը հավանական է, որ հաջորդ մի քանի տարիներին աճի բավականին դանդաղ տեմպով, ընդ որում՝ այս տարի զրոյական, հաջորդ տարի՝ փոքր-ինչ դրական աճով և միջնաժամկետ հեռանկարում շուրջ 3½ աճով: Սրա հետևանքով կդժվարանա աշխատատեղերի ստեղծումը, կենսամակարդակի բարելավումը և պարտքի նվազեցման բարելավումը: Համոզիչ բարեփոխումներ են անհրաժեշտ Հայաստանի տնտեսությունն ավելի բաց, արդյունավետ, դինամիկ և տարածաշրջանի և համաշխարհային տնտեսության հետ ավելի շաղկապված դարձնելու համար: *Սա վճռական առաջնորդության համար կարևորագույն ուղղություն է:*

Դիտարկենք աշխարհաքաղաքական համայնապատկերը: Հարավային Կովկասը շարունակում է մնալ որպես զգալի աշխարհաքաղաքական լարվածությունների տարածաշրջան: Այս առումով նկատի ունեմ Լեռնային Ղարաբաղը, Ադրբեջանի և Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունները, Վրաստանի և Ռուսաստանի միջև լարվածությունները, ինչպես նաև Իրանի հետ միջազգային հանրության հարաբերությունները: Նշված լարվածություններն անդրադառնում են տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրվածության և տարածաշրջանում

ներդրումների վրա, քանի որ հանգեցնում են ֆինանսական և հոգեբանական առումով բարձր ռիսկի հավելավճարի:
Որպես արտաքին դիտորդ, որն գործընթացներից հեռու է, դժվար է պատկերացնել, որ Հայաստանն, առանց այս ճակատում առաջընթացի, կկարողանա իրացնել իր ողջ ներուժը: *Նորից նշեմ, որ ներգրավված, ստեղծարար և վճռական առաջնորդություն է անհրաժեշտ, ինչպես նաև հմուտ և ուսյալ անհատների կողմից հավաքական գործողություն:*

Հայաստանի արձագանքը

Այժմ կուզեի մի քանի րոպեի ընթացքում դիտարկեինք, թե Հայաստանը որքանով է լավ նախապատրաստված արձագանքելու այն մարտահրավերներին, որոնք ուրվագծեցի՝ աճի դանդաղ տեմպ, բարդ աշխարհաքաղաքական միջավայր և համաշխարհային վերափոխումներ:

Ինչպես արդեն նշեցի, 2009 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ընթացքում և դրանից հետո և ներկա արտաքին ցնցումների պարագայում ՀՀ իշխանություններն հետամուտ են եղել կայուն մակրոտնտեսական քաղաքականությունների և խուսափել քաղաքականության լուրջ սխալներից: Ստեղծվել են կարևոր բուֆերներ, ինչպիսիք են՝ արտարժութային պահուստները և փոխառությունների ներգրավման հնարավորությունները: Գնաճը վերահսկողության ներքո է պահպանվել: Բյուջեի պակասուրդը ու ծախսերը պահպանվել են կառավարելի մակարդակում: Հայաստանը զգալիորեն օգտագործել է արտոնյալ ֆինանսավորումը:

Անցած հինգ տարիներին կարևոր տնտեսական վերափոխում է ընթացել: Փոխվել են տնտեսական աճը պայմանավորող ճյուղերը: Գյուղատնտեսությունը

կենսունակության նշաններ է դրսևորում՝ ներգրավելով արտադրության և վերամշակման ուղղությամբ ներդրումներ: Հինգ տարի առաջ գյուղատնտեսության ոլորտում պայմանները սարսափելի էին թվում՝ մասնատված արտադրանք, հնամաշ սարքավորումներ, ֆինանսավորման սահմանափակ հասանելիություն և ապրանքների ցածր ստանդարտներ: Հումքի հասցեական տրամադրումը, բանկային վարկերի տոկոսագումարների վճարման հարցում օժանդակությունը և ենթակառուցվածքներն օգնեցին: Եվրասիական միությանն անդամացությունը կապահովի սննդի արտահանման մեծ շուկա:

Զբոսաշրջությունն ու ծառայությունների ոլորտներն աճում են: Զբոսաշրջության համար նպաստավոր է եղել ավիացիայի ազատականացումը կառավարության «Բաց երկնքի քաղաքականության» շրջանակում: Հանքարդյունաբերությունը պահպանվում է որպես աճի գլխավոր շարժիչ: Այս տարի պղնձի նոր հանքը սկսել է շահագործվել և ոսկու խոշոր նոր հանք է նախապատրաստվում շահագործման: Նշված ծրագրերի համար պահանջվում է զգալի ֆինանսավորում, քաղաքականության կայունության ուժեղ զգացողություն և քաղաքականության ամուր շրջանակ. այն կապահովի, որ հանքարդյունահանման գործունեության հետևանքով շրջակա միջավայրը վնաս չկրի:
Աճի նշված նոր շարժիչներն աստիճանաբար են ի հայտ եկել: Ներկայումս տնտեսական աճն ավելի պակաս է, քան մեկ տասնամյակ առաջ էր, երբ միջինը կազմում էր տարեկան 8.2 տոկոս: Այժմ այն դրա կեսից էլ պակաս է:

Սա մեծ խնդիր է: Հայաստանն այժմ բավարար արագությամբ աշխատատեղեր չի ստեղծում, և արտագաղթը, հատկապես դեպի Ռուսաստան, դեռևս բավականին մեծ է: Հայաստանից տարեկան հեռանում է 40 հազար մարդ՝ բնակչության 1 տոկոսից ավելին: Թեև ֆինանսական օժանդակությունը, որ նշված աշխատողներն ուղարկում են տուն, կենսական է, ՀՆԱ-ի գրեթե 20 տոկոսը, բարձր արտագաղթն

ունի բարձր սոցիալական գին: Հեռացողներից քչերն են վերադառնում և բերում նոր հմտություններ կամ կապեր:

Ի տարբերություն մակրոտնտեսական քաղաքականությունների՝ Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների դանդաղ տեմպը հաղթահարված չէ: Ինչպես տարածաշրջանի մյուս երկրները, ՀՀ տնտեսությունը պետք է ավելի բաց և «մրցողունակ» լինի՝ ընդ որում ավելի մեծ թափանցիկությամբ և մրցակցությամբ: «Մրցողունակ» ասելով նկատի ունեմ, որ ոլորտները և գործունեության տեսակները պետք է ազատ լինեն նոր մասնակիցների և նոր մրցակիցների համար: Այն կօգնի ապահովել արդյունավետություն և խուսափել շուկայում ուժեղ դիրքերի չարաշահումից:

Գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ որոշ առաջընթաց է արձանագրվել: Հայաստանը Համաշխարհային բանկի «Դուինգ Բիզնես» վարկանշային աղյուսակում 189 երկրների շարքում զբաղեցնում է 45-րդ հորիզոնականը: Սակայն Համաշխարհային տնտեսական համաժողովի վարկանշման աղյուսակում այն 85-րդն է 144 երկրների շարքում:

Նշված միավորները համահունչ են Եվրասիական տնտեսական միության երկրների միավորներին, սակայն զգալի ավելի զիջում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին, որոնց առավելությունը ԵՄ անդամակցությունն ու մատակարարման շղթաներին և շուկաներին մոտ գտնվելն է:

Հայաստանը պետք է հաստատակամորեն առաջ գնա՝ այս չիրացված առավելությունները փոխհատուցելու և մարտահրավերներին դիմագրավելու համար, որոնք նկարագրեցի մի քանի րոպե առաջ:

Ի՞նչ է նշանակում գործնականում այս ամենը: Թույլ տվեք մի քանի օրինակ բերել: Տեղեկատվական տեխնոլոգիաները կամ ՏՏ-ն Հայաստանի առավել մրցունակ ոլորտներից է, սակայն համացանցի հասանելիությունը ցածր է և մատչելիությունն ու արագությունը զգալի զիջում է ՏՀԶԿ միջին ցուցանիշին: Մյուս օրինակը էներգետիկայի ոլորտն է: Վերջին երկու տասնամյակներում ուշագրավ նվաճումներ են արձանագրվել էներգամատակարարման կայունությունն ապահովման հարցում: Քսան տարի առաջ Հայաստանը ենթարկվել է շրջափակման, էլեկտրաէներգիայի անջատումների և հուսահատության: Էներգետիկայի համակարգն այժմ բնութագրվում է գազի, հիդրո և ատոմային աղբյուրների միջև հավասարակշռությամբ և էլեկտրաէներգիա է արտահանում Իրան: Սպառողների շրջանում առկա է վճարման բարձր կարգապահություն:

Սակայն էներգետիկայի ոլորտը շարունակում է վնասներ կուտակել՝ պայմանավորված անարդյունավետ կառավարմամբ և ոչ հիմնական գործունեությամբ: Ֆինանսական դժվարությունների հետևանքով պետությունը ակտիվներ է վաճառել և կլանել պարտքը: Սա շարունակվել չի կարող: Լուրջ մարտահրավերներ են նշմարվում, հատկապես՝ Մեծամորի ատոմակայանի փոխարինումը, ինչը ՀՆԱ –ի 50 տոկոսի չափով ծախս կպահանջի:

ՏՏ և էներգետիկայի ոլորտներից բացի, մարտահրավերներ են առկա բարձր, կայուն և ներառական աճի համար կարևորագույն նշանակություն ունեցող մյուս ոլորտներում. ճանապարհներ, առողջապահություն և կրթություն: Մեկ անգամ ևս նշում եմ, որ Հայաստանի տնտեսությունը պետք է ավելի բաց և ավելի թափանցիկ լինի: Պետական ծախսերը պետք է կենտրոնանան մարդկային և ֆիզիկական կապիտալի ուղղությամբ բարձրորակ ներդրումների վրա: Այն կբերի ավելի ցածր ծախսերի, ավելի բարձր մրցակցության, տարածաշրջանային և համաշխարհային

ինտեգրման, ցնցումներին ավելի մեծ դիմադրողականության, ավելի մեծ նորարարության, ավելի բարձր աճի և ավելի մեծ թվով աշխատատեղերի:

Ուստի ի՞նչ է սա նշանակում առաջնորդության և Հայաստանի առաջնորդների համար:
Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները մեծ են՝ ընթացիկ աշխարհաքաղաքական և աշխարհագրական մարտահրավերներ: Հայաստանը փոքր, ցամաքով սահմանափակված երկիր է՝ մոտ հարևաններով: Եթե այդ խոչընդոտների հաղթահարումը դյուրին լիներ, երկար ժամանակ առաջ դրանք լուծված կլինեին:

Նայելով ապագային՝ դժվարին համայնապատկեր է նկատվում: Ռուսաստանը՝ երկարամյա գործընկերը, առերեսվում է դանդաղ աճի ժամանակահատվածի հետ, ինչը վերաբերում է նաև Եվրոպային և Չինաստանին՝ վերջին տասնամյակի ձևավորվող գործընկերներին:
Հայաստանում աճի դանդաղ տեմպը բավարար չէ: Այն բավարար չէ աշխատատեղերի ստեղծման, արտագաղթը կանխելու կամ կենսամակարդակի բարձրացման համար:

Լավ ուսուցանված, լավ տեղեկացված և նվիրված անհատների կողմից առաջնորդություն է անհրաժեշտ քաղաքական և տնտեսական հարցերի շուրջ: Չնայած բարձր գործազրկությանն ու հնարավորություններ որոնող հայաստանցիների հեռանալուն՝ պետական և մասնավոր հատվածներում այնուամենայնիվ կա հմտությունների պակաս և տաղանդավոր առաջնորդների և ղեկավարների խիստ կարիք:

Ղեկավարությունը պետք է բաց լինի նոր գաղափարների, նորարարությունը խթանելու և նոր ձևով աշխատելու՝ մարտահրավերներին դիմագրավելու և հնարավորությունները որսալու համար: Հայաստանի կայուն մակրոտնտեսական քաղաքականությունները ամուր հարթակ են ստեղծում տեսլական ունեցող ունակ առաջնորդներին հաջողության հասնելու համար:
Գյուղատնտեսությունը, ծառայությունները, թեթև արդյունաբերությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները աճի շարժիչն են: Այս և մյուս ոլորտներում տաղանդավոր առաջնորդներ և ղեկավարներ են անհրաժեշտ: Պետական կառավարման ոլորտներում՝ առողջապահություն և կրթություն, տրանսպորտ և հասարակական աշխատանքներ, հարկային վարչարարություն, պետական ծախսեր և ֆինանսների կառավարում և ֆինանսական հատվածի կառավարման և վերահսկողության ոլորտներում անհրաժեշտ են հմուտ և ուսյալ առաջնորդներ:

Ինչպես նշեցի սկզբում, վերջին այցս տեղի է ունեցել վեց տարի առաջ: Վեց տարի առաջ նայելով՝ հաստատ հնարավորություններ կծագեն ավանդական տեղերից՝ Ռուսաստանից, Եվրասիական տնտեսական միության երկրներից, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներից: Դրանք ի հայտ կգան նաև Եվրոպայից և Հյուսիսային Ամերիկայից: Նաև դրանք ի հայտ կգան այնպիսի չսպասվող վայրերից, ինչպիսիք են՝ Մերձավոր Արևելքը, Չինաստանը, Հնդկաստանը, Իրանը և հուսով եմ նաև՝ Թուրքիան և Ադրբեջանը: Պատրաստ եղեք որսալ այդ հնարավորությունները:

Եվ սպասեք անսպասելին: Հինգ տարի առաջ, ո՞վ կմտածեր, որ աշխարհի ամենախոշոր հեռուստաընկերությունը հեռուստաշոուներ, կինոնկարներ և երաժշտություն չի արտադրի: Որ աշխարհի խոշորագույն հյուրանոցային/կացարանային ծառայություններ մատուցող ընկերությունը հյուրանոցների, խաղատների և դահուկային հանգստավայրերի սեփականատեր

չի լինի: Որ աշխարհի խոշորագույն տրանսպորտային ընկերությունը տաքսիների, բեռնատարներ կամ ավտոբուսների սեփականատեր չի լինի: Որ ընդամենը մեկ ձեռնարկատեր կմշակի համաշխարհային վճարումների ապահով համակարգ, գերժամանակակից էլեկտրական մեքենաներ, տիեզերք փոխադրման մասնավոր ընկերություն կամ տների և գործարարության համար արևային էներգիա: Սակայն «Ֆեյսբուքի», «էյր ԲնԲ»-ի , «Ուբերի» և «Էլոն Մասքի» փորձը ցույց են տալիս, որ հնարավորություններն ի հայտ են գալիս չսպասված վայրերից և համագործակցության և հավաքական գործողության նոր ձևերից:

Այս երեկո մի շարք թեմաներ և առարկաներ շոշափեցինք: Եզրափակելով՝ կուզեի կրկնել մի քանի ուղերձներ:
Հայաստանի ներկա առաջնորդների համար՝ անհրաժեշտ են ուժեղ և վճռական ջանքեր՝ կայուն մակրոտնտեսական արդյունքների վրա հենվելով գործարար միջավայրը բարելավելու, տնտեսությունը բացելու և տարածաշրջանին և աշխարհին ավելի սերտորեն ինտեգրվելու համար: Այն կօգնի Հայաստանի նոր առաջնորդներին՝ Ձեզ, սենյակում գտնվող մարդկանց, որսալու նոր հնարավորություններ, հատկապես՝ չսպասված վայրերից:
Ձեզ համար, Հայաստանի ձևավորվող առաջնորդների՝ եղեք համարձակ և ռիսկի դիմեք: Վերցրեք Ձեր երկրի առաջնորդության թիկնոցը:
ԱՄՀ-ի համար. Մենք Հայաստանի կողքին գտնվող գործընկեր ենք եղել վերջին երկու տասնամյակում: Պատրաստ ենք և հավատարիմ քաղաքականության և բարեփոխումների ջանքերին ուղղված մեր օժանդակությունը շարունակելուն:

Շնորհակալություն: